ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2013 թվականի N 171 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 70-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերի դրույթներով, համաձայն <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի պահանջների, **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի փետրվարի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին>> N10-Ա որոշման N6 հավելվածի 2-րդ՝ <<Վարչության գործառույթները>> գլխի <<ե>>, <<ժթ>> և <<ի>> կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

ե. <<առաջարկություններ է ներկայացնում մարզպետին մարզային ենթակայության կրթական հաստատությունների շենքերի, մշակութային և սպորտային օբյեկտների կառուցման, պահպանման ու շահագործման խնդիրների ուղղությամբ>>

ժթ. <<առաջարկություններ է ներկայացնում մարզպետին մարզային ենթակայության մշակութային և սպորտային օբյեկտների կառուցման, հանգստյան գոտիների ստեղծման, պահպանման ու շահագործման խնդիրների ուղղությամբ>>

ի. <<Վարչության խնդիրների և գործառույթների շրջանակներում համագործակցում է ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների հետ>>:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. նոյեմբերի 29
ք. Կապան